ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացմանն ուղղված սուբվենցիաների

Առաջարկ-նախագիծը, որի հիման վրա մշակվել է մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագիրը	*Գյումրու «Հաղթանակի» զբոսայգու զարգացման և համալիր բարեկարգման ծրագիր*
Առաջարկ-նախագիծ ներկայացրած համայնքի բնակիչը /հասարակական միավորումը/քաղաքացիական նախաձեռնությունը	*Ղազարյան Անահիտ Ավետիքի AX0224813*
Առաջարկ-նախագծի հանրային քննարկումը	*Առաջարկ նախագիծը քննարկվել է 18.02.2026 թվականի հանրային լսման ժամանակ* https://www.gyumricity.am/Pages/DocFlow/default.aspx?a=v&g=05303c65-2d0d-432c-81ac-313d1998ae77
Առաջարկ-նախագծի օգտին քվեարկության արդյունքները	https://www.gyumricity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=33615ee5-4390-4d02-b565-0c52504a1782 *Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը 130567 և առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը 2743՝ 2.1 %:*
Ծրագրի անվանումը	*Գյումրու «Հաղթանակի» զբոսայգու զարգացման և համալիր բարեկարգման ծրագիր*
Մարզը, համայնքը, բնակավայրը	*Շիրակի մարզ, Գյումրի համայնք*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*Համայնք՝150 043 մարդ*
Ծրագրի նպատակը	*Ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել Գյումրի քաղաքի «Հաղթանակի» զբոսայգու համալիր բարեկարգում և զարգացում՝ ստեղծելով ժամանակակից, անվտանգ, ներառական և բազմաֆունկցիոնալ հանրային տարածք, որը կհամապատասխանի քաղաքի բնակիչների հանգստի, ժամանցի և սոցիալական շփման ժամանակակից պահանջներին:* *Ծրագրի իրականացումը միտված է զբոսայգու ենթակառուցվածքների բարելավմանը, կանաչապատման ընդլայնմանը, ակտիվ հանգստի և ժամանցի գոտիների ստեղծմանը, ինչպես նաև տարածքի մատչելիության ապահովմանը բոլոր քաղաքացիների համար՝ ներառյալ երեխաներին, երիտասարդներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց:*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Ներկայումս զբոսայգու ենթակառուցվածքների մի մասը գտնվում է մաշված վիճակում, ինչը սահմանափակում է տարածքի լիարժեք և*

	արդյունավետ օգտագործումը բնակիչների կողմից: Մասնավորապես, զբոսայգում առկա են մաշված նստարաններ և հանրային գույք, տարածքի լուսավորությունը բավարար չէ անվտանգության և հարմարավետության տեսանկյունից, կանաչ տարածքների խնամքը պահանջում է բարելավում, իսկ քայլուղիները ամբողջությամբ վնասված են, հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց, մանկասայլակով ծնողների և տարեցների համար: Զբոսայգու տարածքում առկա է նաև շատրվան, որը նախկինում հանդիսացել է այգու կարևոր գեղագիտական և հանգստի տարրերից մեկը, սակայն ներկայումս չի գործում և ունի վերանորոգման կարիք : Վերոնշյալ խնդիրները նվազեցնում են զբոսայգու գրավչությունը և սահմանափակում դրա օգտագործման հնարավորությունները համայնքի տարբեր սոցիալական և տարիքային խմբերի կողմից: Հետևաբար առաջանում է զբոսայգու համալիր բարեկարգման և զարգացման անհրաժեշտություն՝ այն դարձնելով ժամանակակից, անվտանգ, ներառական և բազմաֆունկցիոնալ հանրային տարածք: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել զբոսայգու ենթակառուցվածքների բարելավում, հանրային գույքի տեղադրում, ժամանակակից և էներգախնայող լուսավորության համակարգի ներդրում, շատրվանի վերանորոգում և վերագործարկում, կանաչապատման և լանդշաֆտային բարեկարգման աշխատանքներ: Միաժամանակ նախատեսվում է ապահովել տարածքի մատչելիությունը բոլոր քաղաքացիների համար՝ ստեղծելով հարմարավետ և անվտանգ միջավայր: Ծրագրի իրականացումը կնպաստի քաղաքի հանրային տարածքների զարգացմանը, բնակիչների կյանքի որակի բարձրացմանը, առողջ ապրելակերպի խթանմանը, ինչպես նաև Գյումրի քաղաքի գեղագիտական և զբոսաշրջային գրավչության ավելացմանը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Ծրագրի նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները և ապահովել համապատասխան չափելի արդյունքներ՝ 1. Զբոսայգու ենթակառուցվածքների բարելավում և անվտանգության ապահովում Իրականացնել զբոսայգու քայլուղիների վերանորոգում և բարեկարգում՝ ապահովելով անվտանգ և հարմարավետ տեղաշարժ զբոսայգու ամբողջ տարածքում: Ինչպես նաև տեղադրել տեսախցիկներ՝ բացառապես հանրային անվտանգության նկատառումներով: Ակնկալվող արդյունք՝ բարեկարգված և նորացված քայլուղիներ զբոսայգու ամբողջ տարածքում: 2. Հանրային գույքի արդիականացում Զբոսայգու տարածքում նախատեսվում է տեղադրել նոր նստարաններ և աղբամաններ՝ ապահովելով քաղաքացիների համար հարմարավետ հանգստի պայմաններ: Ակնկալվող արդյունք՝ տեղադրված ժամանակակից հանրային գույք (նստարաններ և աղբամաններ), որը կբարձրացնի տարածքի օգտագործման հարմարավետությունը:

	3. Լուսավորության համակարգի բարելավում Տարածքում կտեղադրվի ժամանակակից և էներգախնայող լուսավորության համակարգ, որը կապահովի զբոսայգու անվտանգ և արդյունավետ օգտագործումը նաև երեկոյան ժամերին: Ակնկալվող արդյունք՝ ամբողջ տարածքում ապահովված բավարար և անվտանգ լուսավորություն: 4. Շատրվանի վերանորոգում և վերագործարկում Նախատեսվում է իրականացնել այգում գտնվող շատրվանի վերանորոգում և վերագործարկում՝ վերականգնելով դրա գեղագիտական և ֆունկցիոնալ նշանակությունը: Ակնկալվող արդյունք՝ վերանորոգված և գործող շատրվան (1 միավոր): 5. Կանաչապատման և լանդշաֆտային բարեկարգման աշխատանքներ Իրականացնել կանաչ տարածքների բարելավում, ծառերի և թփերի տնկում, ինչպես նաև խոտածածկի վերականգնում: Ակնկալվող արդյունք՝ բարելավված և ընդլայնված կանաչապատ տարածքներ: 6. Տարածքի մատչելիության բարելավում Զբոսայգու մուտքերի և քայլուղիների հատվածներում նախատեսվում է կառուցել թեքահարթակներ՝ ապահովելով տարածքի հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց, մանկասայլակով ծնողների և տարեցների համար: 7. Առկա մետաղական արգելապատնեշների վերանորոգում և տեխնիկական վերականգնում: Աշխատանքները ներառելու են վնասված և մաշված հատվածների նորոգում, անհրաժեշտության դեպքում առանձին տարրերի փոխարինում, ինչպես նաև մետաղական կոնստրուկցիաների մաքրում և հակակոռոզիոն ներկում:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնման ընթացակարգի կազմակերպում 05.05.2026 Շինարարական աշխատանքների գնման ընթացակարգի կազմակերպում 25.05.2026 Զբոսայգու տարածքի բարեկարգման և քայլուղիների վերանորոգման աշխատանքների իրականացում,կանաչապատում, 25.06.2026 Այգու ենթակառուցվածքների և լուսավորության համակարգի արդիականացում 26.07.2026 Կանաչապատման և լանդշաֆտային բարեկարգման աշխատանքներ, որոռգման համակարգի բարելավում 26.08.2026 Շատրվանի վերանորոգում և վերագործարկում 30.08.2026 Մետաղական արգելապատնեշների վերանորոգում և տեխնիկական վերականգնում 30.09.2026
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի ուղղակի շահառուներն են Գյումրի քաղաքի բնակիչները, որոնք կօգտվեն «Հաղթանակի» զբոսայգու բարեկարգված և արդիականացված ենթակառուցվածքներից:Անուղղակի շահառուներն են Գյումրի քաղաք այցելող զբոսաշրջիկները, որոնց համար կավելանա քաղաքի գրավչությունը,համայնքային կառույցները և քաղաքային տնտեսության ոլորտը, առևտրի և սպասարկման ոլորտում գործող գործարարները, որոնց գործունեությունը կարող է ակտիվանալ զբոսայգի

<table>
<tr><td></td><td>այցելությունների աճի և քաղաքային միջավայրի բարելավման արդյունքում</td></tr>
<tr><td>Ծրագիրն ընդգրկող բնակավայրում տվյալ տարվան նախորդող տարվա մասնակցային բյուջետավորմամբ իրականացված սուբվենցիոն ծրագրեր</td><td>2025 թվականին մասնակցային բյուջետավորմամբ ունեցել ենք հաղթող ծրագիր՝ «Թափառող և տնային կենդանիների կյանքի բարելավման համալիր ծրագիր»,որի նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ էին, բայց 6 անգամ աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգեր եմ կազմակերպվել և մասնակից չունենալու ապատճառով սուբվենցիոն պայմանագիր չի կնքվել:
Նախատեսվում է ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:</td></tr>
<tr><td>Համայնքի նախորդ տարվա փաստացի և տվյալ տարվա հաստատված բյուջեն</td><td>Ներկայացնել եկամուտները, ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասի ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով (հազ. դրամ):
<table>
<tr><td></td><td>2025թ. փաստացի</td><td>2026 թ. հաստատված</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ
որից՝</td><td>7 445 823,9</td><td>8 708 945.0</td></tr>
<tr><td>- վարչական բյուջեի եկամուտներ</td><td>6 579 413,9</td><td>6 697 035,0</td></tr>
<tr><td>- ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>181052,7</td><td>850 000</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝</td><td>6 786 895,0</td><td>10 043 112,0</td></tr>
<tr><td>- վարչական բյուջեի ծախսեր</td><td>5 182 956,6</td><td>5 841 613</td></tr>
<tr><td>- ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>1 603 938,4</td><td>4 201 499</td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը, որից՝</td><td></td><td></td></tr>
<tr><td>- Շենքերի և շինությունների կառուցում</td><td>12 730,9</td><td>22 000,0</td></tr>
<tr><td>- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում</td><td>1 407 687,3</td><td>3 656 163,0</td></tr>
<tr><td>- Տրանսպորտային սարքավորումներ</td><td>54 258,0</td><td>222 100,0</td></tr>
<tr><td>- Վարչական սարքավորումներ</td><td>12 029,5</td><td>46 000,0</td></tr>
<tr><td>- Այլ մեքենաներ և սարքավորումներ</td><td>45 967,4</td><td>104194,7</td></tr>
<tr><td>-Աճեցվող ակտիվներ</td><td>2 560,8</td><td>7150,0</td></tr>
<tr><td>- Նախագծահետազոտական ծախսեր</td><td>68 704,4</td><td>143 891,1</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր բյուջեն, որից՝</td><td>172 500 .0 հազ. դրամ (100%)</td></tr>
<tr><td>պետական ֆինանսավորման գումարը</td><td>69 850 .0 հազ. դրամ (40%)</td></tr>
<tr><td>համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը</td><td>102 650 .0 հազ. դրամ (60%)</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>Սկիզբը՝_05 մայիս 2026 թ.</td></tr>
</table>

	Ավարտը՝ 20 դեկտեմբեր 2026 թ.
Ծրագրի ծախսերը	*Նախագծանախահաշվային աշխատանքներ – 8 625 000 դրամ* *Տեխնիկական հսկողության աշխատանքներ 1 750 000 դրամ* *Հեղինակային հսկողություն – 1 750 000 դրամ* *Շինարարական աշխատանքներ 160 375 000 դրամ*
Ամսաթիվ	*12 մարտ 2026 թ.*

Համայնքի տնտեսական պատասխանատու
Լենա Մխիթարյան , 094 386020 , l.mkhitaryann@gmail.com

Համայնքի ղեկավարին
փոխարինող Ա.Առաքելյան